ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

26 փետրվարի 2021թ. թիվ 239

Ա.ԴԵՄԻՐՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 24.02.2021թ. թիվ ՍՊ/16/4433-2021 գրությունը և գործուղման առաջադրանքը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանին ս/թ փետրվարի 26-ին թույլատրել մասնակցելու ՀՀ Կոտայքի մարզի Արզական համայնքի «Պարկ Ռեզորթ Աղվերան» հյուրանոցում կայանալիք «Կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի մշակում» ծրագրի քննարկմանը՝ նպատակաուղղված ԿԿԹ բնագավառում կառավարման արդյունավետ պլանավորմանն ու իրագործմանը:

2. Գործուղման հետ կապված ծախսերը վճարում է հրավիրող կողմը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2/26/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 26
ք.Վանաձոր